ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/50

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Պելեկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պելեկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 10.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 6-ին հաստատված պայմանագիր կնքելու մասի որոշումը և հանձնաժողովի 06.04.2020թ-ի 2-րդ արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով կայացրած որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.04.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

17.04.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2020թ.-ին:

2. «Պելեկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պելեկա» ՍՊԸ-ն 10.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ Պատվիրատու) Կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների մատուցման նպատակով ս.թ. մարտի 26-ին կազմակերպել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42 ծածկագրով գնանշման հարցման մրցույթ: Ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «Պելեկա» ՍՊԸ-ն: Մրցույթին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն: Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ»-ի համաձայն՝

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով:

Կատարողի կողմից մատուցված ծառայությունների մասով ուղարկված SMS հաղորդագրությունների քանակական հաշվարկը պետք է իրականացվի բացառապես ՀՀ բջջային օպերատորների SMSC-ի կողմից տրամադրված առցանց հաշվետվության միջոցով, որը Պատվիրատուն պետք է ստանա վեր նշված Պատվիրատուի առկա համակարգի

կարգավորմամբ SMS հաղորդագրությունների հաշվետվությունների ստացման առցանց ծրագրային ինտերֆեյս API միջոցով:

«Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, ինչպես նաև չունի ՀՀ տարածքում գտնվող սերվերներ և ենթակառուցվածք ծառայություն մատուցելու համար:

Մրցույթի հրավերի 7.3 կետով սահմանում է, որ «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 6-ին հաստատված պայմանագիր կնքելու մասի որոշումը և հանձնաժողովի 06.04.2020թ-ի 2-րդ արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով կայացրած որոշումները:

Ի լրումն 10.04.2020թ.-ին ներկայացրած բողոքի բողոքաբերը 19.04.2020թ.-ին հայտնել է հետևյալը.

««ՀՀ ոստիկանության լիազորված ներկայացուցիչ Ա.Չերքեզյանի կողմից ներկայացված պարզաբանման կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 67-րդ կետով սահմանում է, որ «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում

համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ պարտավորեցնել ՀՀ ոստիկանությանը կիրառել Կարգի 67-րդ կետը ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:»:

22.04.2020թ.-ին ներկայացված լրացմամբ բողոքաբերը հայտնել է նաև հետևյալը.

««ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ»-ով սահմանված է, որ «Կապարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Կապարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով»:

«Պելեկա» ՍՊԸ-ն հարցում է ուղարկել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի պայմանագրի վերաբերյալ, սակայն մեզ տեղեկացրել են, որ պատասխան գրությունը կուշանա, հաշվի առնելով երկրում արտակարգ դրությունը: Միևնույն ժամանակ բանավոր պատասխանել են, որ «Պելեկա» ՍՊԸ-ին տվյալ տեղեկատվությունը չեն կարող տրամադրել, քանի որ այն հանդիսանում է առևտրային գաղտնիք, բայց ՀՀ ոստիկանության հարցմանը ի պատասխան կտրամադրեն նշված տեղեկատվությունը:»:

Ի լրումն 10.04.2020թ.-ին ներկայացրած բողոքի և 19.04.2020թ. և 22.04.2020թ. գրությունների 29.04.2020թ.-ին բողոքաբերը հայտնել է հետևյալը.

««Յանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ողջ ժամանակահատվածում միայն բանավոր առարկություններ է ներկայացնում, որն արդեն իսկ վկայում է մեր կողմից բարձրացված խնդրի առկայության վերաբերյալ:

Ձեզ եմ ներկայացնում մեր կազմակերպության կողմից հրատապ կերպով երեք օպերատորներին կատարված հարցումներն ու պատասխանները:

Հատկանշական է, որ մեր կողմից ուղարկված հարցումանը «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ստացվել է պատասխան առ այն, որ 28/04/2020թ դրությամբ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի առկա Կարճ հաղորդագրությունների ուղարկման մատուցման պայմանագիր:»:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.01.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5468-2020 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն՝ հնարավորություն տալով «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը հայտնել է հետևյալը.

««Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020 թվականին ներկայացվել է բողոք «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ--ՔԱՐՏ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման /այսուհետ՝ ընթացակարգ/ վերաբերյալ, որտեղ բողոքաբերը ցանկություն է հայտնել պարտավորեցնելու ՀՀ ոստիկանությանը անվավեր ճանաչելու 06.04.2020 թվականին թիվ 2 արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով կայացրած որոշումները:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով երկու մասնակիցներ՝ «Պելեկա» ՍՊԸ-ն և «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն, որոնց գնային առաջարկները ներկայացնում եմ ստորև՝

Չ/Բ	Ծառայության, ապրանքի, աշխատանքի անվանումը			Պելեկա			Սպրինտ Ուեյ ՍՊԸ		
		Ն/Գ	քանակ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ
1	կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների	9,040,000	1	4.52	0.75	3.77	**3.75**	**0**	**3.75**

«Պելեկա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկով ներկայացրել է «0.02» ՀՀ դրամի չափով շահույթ, իսկ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելիս՝ համաձայն իր կողմից ներկայացված գնային առաջարկի շահույթ չի հետապնդում: Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջների և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, ինչը և արձանագրվել է հայտերի բացման և գնահատման արձանագրության մեջ: Համաձայն գնահատող հանձնաժողովի որոշման ընտրված մասնակից է ճանաչվել «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն, քանի որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը ամենացածրն է, ինչպես նաև հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 40-րդ կետի պահանջների համաձայն հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ կետով հստակ սահմանվում է, որ բավարար գնահատված հայտ և նվազագույն գին

առաջարկած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ հետագայում կնքվում է պայմանագիր: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջի համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում առկա է այդ հավաստումը: Իսկ Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 32-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջների համաձայն որակավորման ապահովումը չի վերադարձվում այն ներկայացրած անձին, եթե վերջինս խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ նվազագույն գին ներկայացրած մասնակցից որակավորման կամ այլ փաստաթղթեր պահանջելու իրավունք չունենք, քանի որ մասնակիցը դրա փոխարեն ներկայացնելու է պայմանագրի գնի չափով որակավորման ապահովում, ինչը կգանձվի նրանից պայմանագրի կետերից որևէ մեկի խախտման հետևանքով պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում: Ոատի գնահատող հանձնաժողովը իր կողմից կայացրած որոշումներում առաջնորդվել է բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում:

Բացի դա ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության կողմից հրապարակվող կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերին գրեթե միշտ հայտ են ներկայացրել այս երկու կազմակերպությունները՝ «Պելեկա» ՍՊԸ-ն և «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն, ուղղակի գնային առաջարկի նվազագույն լինելու պատճառով հաղթել է «Պելեկա» ՍՊԸ-ն, ումից ևս երբեք այդ հավաստումները ներկայացնելու համար փաստաթղթեր չեն պահանջվել, քանի որ մասնակիցը ներկայացրել է հավաստում, որ համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև ընթացակարգերը հայտարարվել են տասը միլիոնը չգերազանցող գնման ընթացակարգով, երբ մասնակցի կողմից որակավորման փաստաթղթեր չեն ներկայացվում, և հիմք ընդունելով մասնակցի հավաստումը տեխնիկական բնութագրի համապատասխանության մասին, նրա հետ կնքվել են պայմանագրեր:

Ոատի գտնում եմ, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման:

Այնուամենայնիվ, գործի ավելի փաստական և մանրամասն ռաումնասիրության համար, ինչպես նաև մասնակիցներից ոչ մեկի շահերը չոտնահարելու նպատակով, առաջարկում եմ, հնարավորության դեպքում, «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ին ներգրավել բողոքի քննության գործընթացի մեջ, որպեսզի վերջինս կարողանա ներկայացնել իր դիրքորոշումը:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի տնօրենը 17.04.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ձեր վարույթում է քննվում «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50 ծածկագրով բողոքը:

Հայտնում ենք, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, արված եզրահանգումները չեն բխում հրավերի ուղղակի պահանջներից, այնտեղ բացակայում են արված եզրահանգումները ապացույցող փաստերը, իսկ բողոքի իրավական հիմքը սխալ է նշված, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբեյաությունևեր չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի հանրապետության քաղաքացիաիրավական հարաբելաությունները կարգավորող օրենսդրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, ղրանում ներառելով՝ բողոքի փաստացի ն իրավական հիմքերը, ապացույցները...:

ՀՀ քաղ.դատ. օր-ի 62-րդ հոդվածի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Այսպիսով.

ա) «Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ն չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով ընդամենը վերացական հայտնել է, որ "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ն չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Մինչդեռ բողոքին կցված փաստաթղթերի ցանկի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ «Պելեկա» ՍՊԸ-ն որևէ կերպ չի հիմնավորել, ապացուցել բողոքով արված եզրահանգումը, այլ ընդամենը վերացականորեն նշել, որ "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ն չունի նման պայմանագրեր: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը իմպերատիվ պահանջում է, որ բողոքում ներառվում են ապացույցներ, իսկ ինչպես երևում է, վերոհիշյալ եզրահանգումը ապացուցված չէ: Ավելին, քանի որ 46-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, և համապատասխանաբար, դրա վրա իրավունքի անալոգիայի ուժով տարածվում են ՀՀ քաղ. դատ-ի իրավական կարգավորումները, ուստի տվյալ դեպքում ապացուցման բեռը, պարտականությունը ՀՀ քաղ.դատ. օր-ի 62-րդ հոդվածի ուժով պետք է դրվի «Պելեկա» ՍՊԸ-ի վրա, այսինքն «Պելեկա» ՍՊԸ-ն պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը, որ "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ն չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Կատարողը պետք է երաշխավորի, որ

ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կայաւդ է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Այսիսով, Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ: Ավելին, նշված փաստի առկայությունը հնարավոր է պարզել միայն Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում, և այդ պարտականությունը դրված է ոչ թե Մասնակցի, այլ արդեն կնքված պայմանագրով Կատարողի վրա: Ուստի ընթացակարգի վերոհիշյալ փուլում «Պելեկա» ՍՊԸ-ն չի կարող քննարկման առարկա դարձնել մի փաստի առկայություն կամ բացակայություն, որը պետք է վրա հասնի բացառապես Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում:

բ) «Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ "Սպրիևտ Ուեյ" ՍՊԸ-ն չունի ձձ տարածքում գտնվող սերվերներ և ենթակառուցվածք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով:

Հրավերի վերոհիշյալ ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ Ընթացակարգով նախատեսված ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով, և հրավերում խոսք անգամ չկա, որ մասնակիցը պետք է ունենա ՀՀ տարածքում գտնվող սերվերներ և ենթակառուցվածք: Ուստի անհիմն է «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից բողոքով "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ին հրավերով չնախատեսված պարտավորության վերագրումը:

գ) «Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով որպես բողոքի իրավական հիմք նշել է հրավերի հետևյալ պահանջը. «7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրեէ է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,

եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կյաում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մերլքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով որի մասով պայմանագիրը լուծվել է»:

Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ բողոքի փաստացի և իրավական հիմքերը. ապացույցները...:

«Պելեկա» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված բողոքի իրավական հիմքի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայացված իրավիճակի վրա չի կայսպ տարածվել ՍՊԸ-ի կողմից վկայակոչված իրավական կարգավորումը, և առավել ես գնահատող հանձնաժողովին չի կարող վերագրվել Հրավերի 7.3 կետի պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի ղեռնս չի մտել պայմանագրի կատարման փուլ:

Մինչդեռ ակնհայտ է, որ նշված փուլում գնահատող հանձնաժողովը չէր կարող խախտել Հրավերի 7.3 կետի պահանջները, իսկ բողոքաբերի կողմից այլ իրավական հիմք չի նշվել:

Միևնույն ժամանակ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ "Սպրինտ Ուեյ" ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից իր հետ պայմանագիր կնքելու դեպքում իր պայմանագրային պարատվորությունները կատարելու է համապատասխան հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների:

Ի լրումն 17.04.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշման Երրորդ անձը 27.04.2020թ.-ին հայտնել է հետևյալը.

««Ձեր վարույթում է քննվում «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50 ծածկագրով բողոքը, որի վերաբերյալ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ներկայացրել էր դիրքորոշում:

Այնուհետև ստացվել է «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 22.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ուղղված գրությունը, որով «Պելեկա» ՍՊԸ-ն հայտնել է, որ հարցում է կատարել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի հետ առկա պայմանագրի վերաբերյալ: «Պելեկա» ՍՊԸ-ն նշված գրությամբ տեղեկացրել է, որ

իբրն թե «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն հայտնել է, որ պատասխան գրությունը կուշանա հաշվի առնելով երկրում արտակարգ դյությունը: Միևնույն ժամանակ իբրև թե «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն բանավոր պատասխանել է, որ «Պելեկա» ՍՊԸ-ին տվյալ տեղեկատվությունը չեն կարող տրամադրել, քանի որ այն հանդիսանում է առեստրային գաղտնիք, բայց ՀՀ ոստիկանության հարցմանն ի պատասխան կտրամադրվի նշված տեղեկատվությունը:

Վերոհիշյալի հետ կապված ներկայացվում են հետևյալ նկատառումները.

- *Նախ, եթե նշված հարցը վերաբեյաում է ՀՀ ոստիկանության կողմից հարցում կատարելու անհրաժեշտության մասին, ապա անհասկանալի է վեյոհիշյալ գրությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին հասցեագրելը:*

Գրությունում նշված ոչ մի փաստի վերաբերյալ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևիցե ապացույց, և ինչպես ներկայացված բողոքով, շարադրանքը կրում է վերացական բնույթ:

Բողոքներ քննող անձին կրկին խնդրում ենք նկատի ունենալ, որ հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագյտությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Այպիսով, Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ: Ավելին, նշված փաստի առկայությունը հնարավոր է պարզել միայն Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում, և այդ պարտականությունը դրված է ոչ թե Մասնակցի, այլ արդեն կնքված պայմանագրով Կատարողի վրա: Ուստի ընթացակարգի վերոհիշյալ փուլում «Պելեկա» ՍՊԸ-ն չի կարող քննարկման առարկա դարձնել մի փաստի առկայություն կամ բացակայություն, որը պետք է վրա հասնի և հայտնի դառնա բացառապես Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում: Առավել ես իրավաչափ չէ այս փաստի հետ կապված պահանջել ՀՀ ոստիկանությունից կատարել համապատասխան հարցում:

«Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի շրջանակնեյաում բարձրաձայնում է ՀՀ ոստիկանության կողմից համապատասխան հարցում անելու անհրաժեշտության հարցը և որպես իրավական հիմք նշում է ընթացակարգի հրավերի 7.3. կետը: Մասնավորապես, նշված կետի համաձայն «7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի

պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է»:

Վերոհիշյալ իրավական հիմքի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայացված իրավիճակի վրա չի կարող տարածվել ՍՊԸ-ի կողմից վկայակոչված իրավական կարգավորումը, և առավել ևս գնահատող հանձնաժողովին չի կարող վերագրվել հրավերի 7.3 կետի պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգը դեռևս չի մտել պայմանագրի կատարման փուլ:

Այլ կերպ ասած, նշված իրավիճակում ՀՀ ոստիկանությունը չունի իրավական հիմք պահանջելու նման տեղեկատվություն, քանի որ վերոհիշյալ պարտականությունը դրված է ոչ թե մասնակցի, այլ պայմանագրի կատարողի վրա:

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ բանկային կամ առևտրային գաղտնիքը պահպանվում է հատուկ ռեժիմով, և նման գաղտնի տեղեկատվությունը տրամադրվում է բացառապես դատարանի որոշման հիման վրա: Ուստի, անգամ ՀՀ ոստիկանության կողմից այս փուլում նման ոչ իրավաչափ հարցում կատարելու դեպքում առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել որևիցե սուբյեկտի հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ դատարանի համապատասխան որոշում:»:

Ի լրումն 17.04.2020թ.-ի և 27.04.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշման 06.05.2020թ.-ին հայտնել է նաև հետևյալը.

««Ձեր վարույթում է քննվում «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50

ծածկագրով բողոքը, որի վերաբերյալ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն ներկայացրել էր երկու դիրքորոշում:

Այնուհետև ստացվել է «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 29.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ուղղված գրությունը, որով «Պելեկա» ՍՊԸ-ն հայտնել է, որ իբրև թե ի պատասխան ՍՊԸ-ի հարցման «Յուքոմ» ՓԲԸ-ն հայտնել է, որ 28.04.2020թ. դրությամբ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի առկա Կարճ հաղորդագրությունների ուղարկման մատուցման պայմանագիր:

Վերոհիշյալի հետ կապված ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Բողոքներ քննող անձին կրկին խնդրում ենք նկատի ունենալ, որ հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Այսիսով, Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ: Ավելին, նշված փաստի առկայությունը հնարավոր է պարզել միայն Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում, և այդ պարտականությունը դրված է ոչ թե Մասնակցի, այլ արդեն կնքված պայմանագրով Կատարողի վրա: Ուստի բացառապես Կատարողը պայմանագրի կատարման փուլում պետք է ունենա SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, որպեսզի պատշաճ կատարի կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունը պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան: Արդյունքում ընթացակարգի վերոհիշյալ Փուլում «Պելեկա» ՍՊԸ-ն չի կարող քննարկման առարկա դարձնել մի փաստի առկայություն կամ բացակայություն, որը պետք է վրա հասնի և հայտնի դառնա բացառապես Կատարողի կողմից պայմանագրի կատարման փուլում:

Գտնում ենք, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությանը իբրև թե տրված «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից, չի կարող գնահատվել որպես պատշաճ ապացույց, քանի որ այդ գրությունը հաստատված չէ «Յուքոմ» ՓԲԸ-ի իրավասու պաշտոնատար անձի ոչ ստորագրությամբ, ոչ էլ կնիքով:»:

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարավել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել՝ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն և «Պելեկա» ՍՊԸ-ն, որոնք ներկայացրել են ներքոնշյալ գնային առաջարկները.

Հ/Բ	Ծառայության, ապրանքի, աշխատանքի անվանումը			Պելեկա			Սպրինտ Ուեյ ՍՊԸ		
		Ն/Գ	քանակ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ
1	կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների	9,040,000	1	4.52	0.75	3.77	**3.75**	**0**	**3.75**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 06.04.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը: Մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ին: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետ է սահմանվել պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 5-րդ օրացուցային օրը: Անգործության ժամկետի ավարտից հետո «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի հետ կկնքվի պայմանագիր:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ՝

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով:

Կատարողի կողմից մատուցված ծառայությունների մասով ուղարկված SMS հաղորդագրությունների քանակական հաշվարկը պետք է իրականացվի բացառապես ՀՀ բջջային օպերատորների SMSC-ի կողմից տրամադրված առցանց հաշվետվության միջոցով, որը Պատվիրատուն պետք է ստանա վեր նշված Պատվիրատուի առկա համակարգի կարգավորմամբ SMS հաղորդագրությունների հաշվետվությունների ստացման առցանց ծրագրային ինտերֆեյս API միջոցով:

«Յուքոմ» ՓԲԸ-ի աշխատակից Գոհար Նահապետյանի կողմից Gohar.Nahapetyan@ucom.am էլ. փոստից Ընկերության հարցմանն ի պատասխան հայտնվել է, որ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի և «Յուքոմ» ՓԲԸ-ի միջև Կարճ հաղորդագրությունների ուղարկման մատուցման պայմանագիր առկա չէ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն և «Պելեկա» ՍՊԸ-ն ներկայացրել են ներքոնշյալ գնային առաջարկները.

Հ/Բ	Ծառայության, ապրանքի, աշխատանքի անվանումը			Պելեկա			Սպրինտ Ուեյ ՍՊԸ		
		Ն/Գ	քանակ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ	Առաջարկված գինը	ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ
1	կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների	9,040,000	1	4.52	0.75	3.77	**3.75**	**0**	**3.75**

Հանձնաժողովի 06.04.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը: Մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ին: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետ է սահմանվել պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 5-րդ օրացուցային օրը: Անգործության ժամկետի ավարտից հետո «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի հետ կկնքվի պայմանագիր:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ՝

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով:

Կատարողի կողմից մատուցված ծառայությունների մասով ուղարկված SMS հաղորդագրությունների քանակական հաշվարկը պետք է իրականացվի բացառապես ՀՀ բջջային օպերատորների SMSC-ի կողմից տրամադրված առցանց հաշվետվության միջոցով, որը Պատվիրատուն պետք է ստանա վեր նշված Պատվիրատուի առկա համակարգի կարգավորմամբ SMS հաղորդագրությունների հաշվետվությունների ստացման առցանց ծրագրային ինտերֆեյս API միջոցով:

«Յուքոմ» ՓԲԸ-ի աշխատակից Գոհար Նահապետյանի կողմից Gohar.Nahapetyan@ucom.am էլ. փոստից Ընկերության հարցմանն ի պատասխան հայտնվել է, որ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի և «Յուքոմ» ՓԲԸ-ի միջև Կարճ հաղորդագրությունների ուղարկման մատուցման պայմանագիր առկա չէ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով գործով ներգրավված անձանց ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Պելեկա» ՍՊԸ-ն, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք և ներկայացնելով Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները: Այն, որ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր:

Սույն գործով «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը հավաստող որևէ վերաբերելի ապացույց, որով հնարավոր կլիներ հերքել և բացառել բողոքաբերի կողմից բողոքով բերված փաստական հանգամանքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն երրորդ անձն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին, այն է՝ վերջինս չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ: Որպիսի պայմաններում, հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման, իսկ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պելեկա» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**